

ՀՀ Կենտրոնական բանկը գրանցեց «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կողմից թողարկվող պարտատոմսերի գրանցման հայտարարագիրը

Ս.թ. հունիսի 12-ին ՀՀ Կենտրոնական բանկը գրանցեց «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կողմից թողարկվող պարտատոմսերի գրանցման հայտարարագիրը:

Ընկերությունը սկսել է պարտատոմսերի ձեռք բերման բաժանորդագրության գործընթացը: Պարտատոմսերն ունեն հետևյալ բնութագիրը.

Արժեթղթերի քանակը՝ 100 000 հատ

Արժեթղթերի ձևը՝ Ոչ փաստաթղթային

Անվանական արժեքը՝ 10 000 ՀՀ դրամ

Արժեթղթերի տեղաբաշխման ձևը՝ Հրապարակային Տարեկան եկամտաբերությունը՝ 9.0 %

Մարման ժամկետը՝ 18 ամիս

Տեղաբաշխման գինը՝ 10 000 ՀՀ դրամ

Արժեկտրոնը վճարվում է 4.5%-ի չափով՝ 6 ամիսը մեկ անգամ:

Պարտատոմսերի տեղաբաշխողն է «Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ-ն: Պարտատոմսերի ձեռք բերման հայտերն (կից ներկայացվում են) ընդունվում են «Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ կողմից՝ ք. Երևան-33, ձ. Քոչարի 5, հեռ. 27-87-76, 26-55-28, 26-45-33, E-mail:

sales@cascadeinvmts.com հասցեյով:

Բաժանորդագրությունն ավարտվում է ս.թ. հունիսի 19-ին: Տվյալ ժամկետը կարող է հետաձգվել երկու շաբաթ, մինչև ս.թ. հուլիսի 3-ը: Բաժանորդագրությունն ավարտված չի համարվում և հայտերի ընդունման գործընթացը շարունակվում է մինչև Թողարկողի և/կամ Տեղաբաշխողի ինտերնետային կայքերում կամ հրապարակային համարվող այլ ձևով՝ հանրությանը բաժանորդագրության ավարտի մասին տեղեկացումը, բայց ոչ ուշ, քան մինչև ս.թ. հունիսի 3-ը:

Սույն հայտարարությունը չի հանդիսանում արժեթուղթ վաճառելու առաջարկ, կամ արժեթուղթ գնելու առաջարկի հայցում: Նման առաջարկը կարող է արվել միայն ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ազդագրով:

Գրանցված Ազդագրի պատճենները և այլ անհրաժեշտ տեղեկությունները կարելի է ստանալ «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ից՝ ք. Երևան, Թբիլիսյան խճ. 43, հեռ. 29-47-77 E-mail: inbox@armrusgasprom.am, ինչպես նաև տեղաբաշխողից՝ «Կասկադ Ինվեստմենտս» ՓԲԸ, ք. Երևան-33, ձ. Քոչարի 5, հեռ. 27-87-76, 26-55-28, 26-45-33, E-mail: sales@cascadeinvmts.com: